ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-479[1] -13.02.2020-ԱՍ-011/0),«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-479[2] -13.02.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-479[3] -13.02.2020-ԱՍ-011/0), ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-479[4] -13.02.2020-ԱՍ-011/0) եւ «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-479[5] -13.02.2020-ԱՍ-011/0) նախագծերի փաթեթի նախնական քննարկման համար ներկայացված բանավոր առաջարկների

Առաջարկի հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծերի փաթեթի կազմում ընդգրկված «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացվել է փոփոխությունների կատարման տեսքով, այն դեպքում, երբ դրանով նոր խմբագրությամբ է շարադրվում գործող՝ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքը: Նման պրակտիկա կիրառվել է նախկինում, երբ «մայր» օրենքների ընդունման համար «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված էր երրորդ ընթերցման ռեժիմ (եւ ներկայացված տեսքով օրենքերի ընդունման նպատակը կայանում էր երրորդ ընթերցման ընթացակարգից խուսափելու մեջ), ինչը ներկայումս գործող «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված չէ (ուստի՝ կիրառվող մոտեցումը որեւէ կերպ արդարացված չէ): Հետեւաբար, կարծում ենք, շատ ավելի նպատակահարմար կլինի քննարկման եւ քվեարկության դնել «Հոգեբուժական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագիծը եւ դրանով ուժը կորցրած ճանաչել «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ 2004 թվականի մայիսի 25-ի ՀՕ-80-Ն օրենքը: Արդյունքում, հնարավոր կլինի խուսափել մի շարք տեխնիկական խնդիրներից (օրենքի որոնումներ, դրան հղումների կատարումներ եւ այլն), ինչպես նաեւ տվյալ օրենքում երկու հատ 1-ին հոդված ունենալու իրողությունից:	Չի ընդունվել: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, եթե նորմատիվ իրավական ակտում կատարվում են ծավալուն փոփոխություններ կամ լրացումներ, ապա ակտը կարող է ամբողջությամբ շարադրվել նոր խմբագրությամբ	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-*	««Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրի երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» եւ Նախագծի 1-ին հոդվածում նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է: Նախագծերի վերնագրերը խմբագրվել են:	**Ընդունվել է:**

	ԱՍ-011/0) ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-479[4] -13.02.2020-ԱՍ-011/0)	առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 18-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն առաջարկը վերաբերելի նաեւ ««Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրին: Միեւնույն ժամանակ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիրը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին:		
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով, նույն առաջարկը վերաբերելի է Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի մյուս հոդվածներում նշված «Հայաստանի Հանրապետության օրենք» բառերին՝ իր հոլովաձեւերով:	Ընդունվել է: Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասում, 22-րդ հոդվածի 1-ին մասում և 27-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել են փոփոխություններ:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերը հիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում եւ արտահիվանդանացոային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում հասկացությունների համար սահմանում են նույն բացատրությունը, այն է՝ *««Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպման պայման»*: Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերի հիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում եւ արտահիվանդանացոային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում հասկացությունների համար տալ տարբեր բացատրություն՝ համապատասխանաբար՝ ««Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպման պայման» ձեւակերպման մեջ *«հոգեբուժական»* բառից առաջ նշելով *«հիվանդանոցային»* եւ *«արտահիվանդանոցային»* բառերը:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերը խմբագրվել են:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող	Ընդունվել: Նախագծի 3-րդ հոդվածի 19-րդ կետը	**Ընդունվել է:**

	օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը նախատեսում է հետեւյալ կարգավորումը՝ *«**երեխա**՝ «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանող անձ,»*: Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 3-րդ հոդվածի 19-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝ *«**երեխա**՝ «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված անձ,»*:	խմբագրվել է:	
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հոգեբուժական հանձնաժողովի, իսկ փվյալ պահին **դրա ստեղծման անհնարինության դեպքում** հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշման հիման վրա հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստացող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ»*: Կարծում եմ «**դրա ստեղծման անհնարինության դեպքում»** ձեւակերպումն ունի հստակեցման կարիք, քանի որ նշված ձեւակերպումից հասկանալի չէ, թե ինչպիսի ենթադրյալ սահմանափակ իրավիճակների մասին է խոսքը, երբ հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշումը կարող է բավարար համարվել: Միաժամանակ առաջարկում եմ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում *«իրեն կամ շրջապատին ֆիզիկական վնաս պատճառելու իրական սպառնալիքի դեպքում»* բառերը փոխարինել *«իրեն կամ շրջապատին ֆիզիկական վնաս պատճառելու **կամ դրա** իրական սպառնալիքի դեպքում»*:	Ընդունվել է: 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը խմբագրվել են:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասում առաջարկում ենք «բժշկական կազմակերպության» բառերը փոխարինել «հոգեբուժական կազմակերպության» բառերով: Նույն առաջարկը վերաբերելի է Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի տեքստում կիրառվող մյուս «բժշկական կազմակերպություն» բառերին՝ իրենց հոլովաձեւերով, ինչպես նաեւ «կազմակերպություն» բառերին, երբ դրանք կիրառվում են «հոգեբուժական կազմակերպություն» իմաստով:	Ընդունվել է: Վրիպակներն ուղղվել են:	**Ընդունվել է:**

Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասում «բուժող բժիշկ» եւ «հերթապահ բժիշկ» բառերը փոխարինել «բուժող բժիշկ-հոգեբույժ» եւ «հերթապահ բժիշկ-հոգեբույժ» բառերով:	Ընդունվել է:Նախագծի 8-րդ հոդվածի 7-րդ մաս	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 3-րդ գլուխը վերնագրված է «Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողներին ներկայացվող պահանջները», մինչդեռ գլխում ներառված 15-րդ հոդվածը նախատեսում է կարգավորում անձի մոտ հոգեկան խանգարում ախտորոշելուն ներկայացվող պահանջի վերաբերյալ: Առաջարկում եմ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 3-րդ գլխի վերնագրում ավելացնել «ախտորոշում» բառը համապատասխանեցնելով դրանում ներառված հոդվածների կարգավորման բովանդակությանը:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ գլխի վերնագիրը խմբագրվել է:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության «Հայաստանի Հանրապետության» բառերը առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը :	Ընդունվել է: Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մաս և 4-րդ մասերից «Հայաստանի Հանրապետության» բառերը հանվել են:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը :	Ընդունվել է: Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասից «Հայաստանի Հանրապետության» բառերը հանվել են:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 24-րդ հոդվածը առաջարկում ենք վերնագրել «Ոչ հոժարակամ հոսպիտալացման հիմքը եւ կարգը»՝ հաշվի առնելով այն, որ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է ոչ հոժարական հոսպիտալացման հիմքերը:	Ընդունվել է: Նախագծի 24-րդ հոդվածի վերնագիրը խմբագրվել է:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>>	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով տրվում է «իրազեկման թերթիկ» եզրույթի սահմանումը, ըստ որի. իրազեկման թերթիկը՝ լիազոր մարմնի կողմից հաստատված ձեւի փաստաթուղթ է, որում նշված են հոգեբուժական կազմակերպությունում հոգեբուժական օգնություն եւ	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը և 26-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել են:	**Ընդունվել է:**

	(*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	սպասարկում ստացող անձի ***իրավունքները, իրավունքների սահմանափակումները:***Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանվում է, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր ոք հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում մայրենի կամ իրեն հասկանալի լեզվով իրավունք ունի ***տեղեկություններ ստանալ*** իր առողջական վիճակի, ***իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակման դեպքերի վերաբերյալ***:Նույն հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցիչը, բժիշկ-հոգեբույժի կողմից ***իրազեկվում են*** հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձի ***իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների մասին՝*** սույն օրենքի հավելվածով սահմանված կարգով:Այդ կապակցությամբ, նշենք, որ կիրառված են միեւնույն միտքն արտահայտող տարբեր հասկացություններ: Ուստի, առաջարկում ենք կիրառել միեւնույն տերմիններն ու բառերը, որոնք արտահայտում են միեւնույն միտքը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը (տե ՛ ս նաեւ Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասը): Բացի դրանից, հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձը իրազեկվում է իր իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների մասին, մինչդեռ իրազեկման թերթիկում նշվում է հոգեբուժական կազմակերպությունում հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստացող անձի իրավունքները, իրավունքների սահմանափակումները:		
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասի «հոգեկան խանգարում ունեցող անձանց» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց» բառերով, նկատի ունենալով, որ սույն օրենքի հավելվածով սահմանվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների իրացման ընթացակարգը:	Ընդունվել է:Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասը խմբագրվել է:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության «Բժիշկ-հոգեբույժի կամ հոգեբուժական հանձնաժողովի» բառերը փոխարինել «Հ ոգեբուժական հանձնաժողովի, հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի » բառերով, նկատի ունենալով, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավունքները սահմանափակվում են	Ընդունվել է:Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

		հոգեբուժական հանձնաժողովի, հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշմամբ: Նույնը վերաբերում է նաեւ Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասին:Բացի այդ, Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում «դրա անհնարինության դեպքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «դրա ստեղծման անհնարինության դեպքում» բառերով:		
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի վերջում գրված«կիրառվել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին» եւ 9-րդ մասի 1-ին կետի «վարում է» բառերըհանել, իսկ 9-րդ մասի 2-րդ կետում «կամ մեկուսացման միջոցների» բառերից հետո դրված ստորակետը փոխարինել «կամ» շաղկապով:	Ընդունվել է:Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մաս, 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 8-րդ մասի «բժշկական կազմակերպությանղեկավարին» բառերը փոխարինել «բժշկական կազմակերպության տնօրենին» բառերով՝ ապահովելով իրավական ակտում միատեսակ տերմինների կիրառման պահանջի իրացումը (տե Բ ս նույն հոդվածի 12-րդ մասը)	Ընդունվել է: 7-րդ հոդվածի 8-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում ենք քննարկել Նախագծի 7-րդ հոդվածի 12-րդ մասի «սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անձը» բառերը«ապա հոգեբուժականհանձնաժողովը, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում հետազոտողը կամ բուժող բժիշկ-հոգեբույժը կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժը» բառերով փոխարինելու հարցը, քանի որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդ կիրառելու մասին որոշում՝ ըստ Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի, կարող է կայացվել վերը թվարկված անձանցից որեւէ մեկի կամ հոգեբուժականհանձնաժողովի կողմից:	Ընդունվել է:7-րդ հոդվածի 12-րդ մասը խմբագրվել է:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 8-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանվում է, որ «Ֆիզիկական զսպման միջոցների կիրառման պատճառների վերացման դեպքում որոշվում է ֆիզիկական զսպման միջոցների կիրառումը դադարեցնել:»: Առաջարկում ենք հստակեցնել, թե ու՞մ կողմից է այդ որոշումը կայացվում:	Ընդունվել է:Նախագծի 8-րդ հոդվածի 9-րդ մասում կատարվել է համապատասխան լրացում:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>>	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ մեկուսացման միջոցները կիրառվում են 18 տարեկանից բարձր	Ընդունվել է:Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվել է համապատասխան	**Ընդունվել է:**

	օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	անձանց համար առավելագույնը 4 ժամ տեւողությամբ, իսկ 9-17 տարեկան անձանց համար՝ առավելագույնը 2 ժամ տեւողությամբ: Այդ կապակցությամբ առաջարկում ենք հստակեցնել մեկուսացման միջոցի կիրառման առավելագույն ժամկետները ի՞նչ ժամանակահատվածի կտրվածքով է սահմանված, այլապես պարզ չէ նշված դեպքում դա վերաբերում է 24 ժամվա ընդհանուր ժամանակահատվածին, թե ոչ (տես Նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասը):	լրացում:	
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի օտարերկրացի լինելու դեպքում կազմակերպության գործադիր տնօրենը նույն օրը, իսկ ոչ ախատանքային օրերին եւ ժամերին՝ հաջորդ աշխատանքային օրը միաժամանակ գրավոր տեղեկացնում է նաեւ լիազոր մարմնին, որն էլ իր հերթին այդ մասին հայտնում է արտաքին գործերի բնագավառում պետական կառավարման մարմնին: Այդ կապակցությամբ, առաջարկում ենք հստակեցնել, թե ո՞ր կազմակերպության գործադիր տնօրենն է գրավոր տեղեկացնում լիազոր մարմնին: Նույնը վերաբերում է նաեւ հավելվածի 18-րդ կետին:	Ընդունվել է:Նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ մասում և հավելվածի 18-րդ կետում լրացվել է «հոգեբուժական» բառը:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում ենք Նախագծի 24-րդ հոդվածի 4-րդ մասում «կազմակերպության» բառից առաջ լրացնել «հոգեբուժական» բառը (տես նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը):	Ընդունվել է: նախագծի 24-րդ հոդվածի 5-րդ մասը լրացվել է «հոգեբուժական» բառով:	**Ընդունվել է:**
Նարեկ Զեյնալյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծերի փաթեթի ընդունմամբ անհրաժեշտություն է առաջանում«Ոստիկանության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում կիրառված «հոգեկան խանգարումով տառապող» բառերը, «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 80-րդ հոդվածի 6-րդ պարբերությամբ եւ «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում կիրառված «հոգեկան խանգարում ունեցող» բառերն իրենց հոլովաձեւերով փոխարինել «հոգեկան առողջության խնդիր ունեցող» բառերով՝ իրենց համապատասխան հոլովաձեւերով:	Ընդունվել է: Նախագծերի փաթեթին մշակվել է նաև «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Փախստականների և ապաստանի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը	**Ընդունվել է:**
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն	Օրենքի նախագծի 1-ին հոդվածում սուբյեկտներին թվարկել առանձին, որ հոդվածն ավելի ընկալելի լինի:	Չի ընդունվել: Նախագծի 1-ին հոդվածում սահմանվում են այն սուբյեկտները, որոնք հանդիսանում են հոգեբուժական օգնություն և	**Ընդունվել է:**

	կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)		սպասարկում ստացող և որոնց նկատմամբ տարածվում է նախագծով սահմանված կարգավորումները:	
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկվում է նախագծում ամրագրել խտրականության հասկացությունը: Վերջինս բխում է նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվեցիայից: Այսպես, առաջարկվում է այս հոդվածը լրացնել հետևյալ հասկացությամբ. «Խտրականություն հոգեկան խանգարման հետևանքով՝ հոգեկան խանգարման հետևանքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որոնց նպատակն է սահմանափակել կամ նվազագույնի հասցնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, կիրառումը կամ դրանցից օգտվելը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորտում՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Այն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը՝ ներառյալ անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման մերժումը:»:	Չի ընդունվել: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անդամ պետությունները հանձն են առնում ապահովելու եւ սատարելու բոլոր անձանց մարդկային իրավունքները եւ հիմնարար ազատությունները՝ առանց հաշմանդամության վրա հիմնված որեւէ խտրականության: Այդ նպատակով անդամ պետությունները հանձն են առնում. «ա) ընդունել համապատասխան օրենսդրություն, վարչական եւ այլ միջոցներ, որոնք կապահովեն սույն կոնվենցիայով նախատեսված իրավունքները. բ) գործադրել համապատասխան քայլեր, ներառյալ՝ օրենսդրություն, որոնք անհրաժեշտ են փոփոխելու կամ վերացնելու գոյություն ունեցող օրենքները, կանոնակարգերը, սովորույթները եւ պրակտիկան, որոնք ներկայացնում են խտրականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ...»: Սույն նախագծի ընդունման գլխավոր նպատակը հենց հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորման բացառումն է: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ «Սույն օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ նախագծի 3-րդ հոդվածում տրվում են այն եզրույթների բացատրությունները, որոնք կիրառվում են նախագծի այլ հոդվածներում: Այդ տեսանկյունից նախագծի որևէ հոդվածով «խտրականություն» եզրույթը չի կիրառվում, հետևաբար դրա բացատրությունը տալու անհրաժեշտությունը բացակայում է:	**Ընդունվել է:**
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում	Առաջարկում եմ նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում «հոգեբանական» բառը փոխարինել «հոգեբանության» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

Տիգրանյան	փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)			
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկում եմ նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «իր ընտրած անձին» բառերը փոխարինել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող «կոնտակտավոր անձ» եզրույթով:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում և 2-րդ մասի 2-րդ կետում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միաժամանակ 3-րդ հոդվածում օրենքում կիրառվող հիմնական սահմանված հասկացություններում լրացվել է «կոնտակտային անձ» հասկացությունը:	**Ընդունվել է:**
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրող կազմակերպությունները կրում են փակ հաստատությունների բնույթ, ինչն առավել ռիսկային է դարձնում տվյալ հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանությունը: Կարևոր է շեշտադրել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովմանն ուղղված պետության պարտավորությունը: Մասնավորապես, բոլոր այն դեպքերում, երբ անձը օրինական ներկայացուցչի, ոստիկանության աշխատակցի, բժշկի կամ այլ անձի ուղեկցությամբ ոչ հոժարակամ բերվում է հոգեբուժական հաստատություն, անկախ անձի և/կամ օրինական ներկայացուցչի դիմումի, անձը պետք է ապահովվի ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի կողմից նշանակված փաստաբանով: Ուստի առաջարկվում է հոգեբուժական հաստատություն բերվելու պահից ապահովել անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը անկախ իր և/կամ օրինական ներկայացուցչի դիմումի առկայության փաստից:	Չի ընդունվել: Նախագծով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի համար սահմանվում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, այդ թվում՝ հանրային պաշտպանություն: Սակայն հոգեբուժական կազմակերպությանը յուրաքանչյուր դեպքով հոգեբուժական կազմակերպություն մուտք գործած անձին հանրային պաշտպանով ապահովելու պարտականությամբ ծանրաբեռնելն անիրական է:	**Ընդունվել է:**
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Նախագծի 8-րդ հոդվածի 6-րդ մասում, 10-րդ հոդվածի 4-րդ մասում ինչու է սահմանվում 9 տարեկանի շեմը: Այսինքն՝ ինչքանով է հիմնավոր 10 տարեկանից սկսած երեխայի նկատմամբ կիրառել ֆիզիկական զսպման միջոց:	Նման տարիքային շեմ նախատեսվում է, օրինակ, ամերիկյան համակարգում (https://dhs.iowa.gov/sites/default/files/SummaryCMS_SeclusionRestraintRegs_Bazelon_10-05-2011.pdf?051820200748):	**Ընդունվել է:**
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>>	Հոգեբուժական վկայարկումը հանդիսանում է անձի մոտ հոգեկան խնդրի առկությանը կամ բացակայությանն ապացուցմանն ուղղված գործընթաց: Այսինքն՝ պարզ չէ անձի ունի հոգեկան խնդիր, թե ոչ: Ուստի շատ կարևոր է անձի լսված	Ընդունվել է: Նախահծի 19-րդ հոդվածի 2-րդ մասում, 22-րդ հոդվածի 2-րդ մասում, 24-րդ հոդվածի 1-ին մասում, նախագծի հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետում «դեպքում» բառից	**Ընդունվել է:**

	(*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	լինելու և իրավունքների պաշտպանությունը երաշխավորել հենց սկզբից: Այս դրույթի տառացի մեկնաբանությամբ ստացվում է, որ հոգեբուժական վկայարկումը իրականացվում է անձի իրազեկված համաձայնությամբ, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի իրազեկված համաձայնությամբ: Ուստի առաջարկվում է նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ մասում, 22-րդ հոդվածի 2-րդ մասում, 24-րդ հոդվածի 1-ին մասում, նախագծի հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետում «դեպքում» բառից հետո լրացվի «նաև» բառը, հակառակ դեպքում ստացվում է որ, եթե անձը արդեն ունի օրինական ներկայացուցիչ, ապա իր կարծիքը, համաձայնությունը չի պահանջվում հոգեբուժական վկայարկում իրականացնելու համար: Նաև այստեղ առաջարկվում է վկայարկման գործընթացին ևս ներկա դարձնել փաստաբան:	հետո լրացվել է «նաև» բառը:	
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Դատահոգեբուժական փորձաքննությունը դատարանի կողմից կիրառվող հարկադրանքի միջոց է: Դատարանի կողմից դատահոգեբուժական փորձաքննության նշանակման համար հիմք է հանդիսանում օրենքով սահմանված մարմնի կամ պաշտոնատար անձի որոշումը: Ընդ որում, փորձաքննություն նշանակելիս համապատասխան մարմինները, ներառյալ դատարանները օբյեկտիվորեն չեն տիրապետում բավարար գիտելիքների անձի հոգեկան վիճակը գնահատելու և դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը գնահատելու համար: Միևնույն ժամանակ, դատահոգեբուժական փորձաքննության իրականացման ընթացքում տեղի են ունենում անձի իրավունքների սահմանափակումներ, ընդհուպ մինչև ազատազրկումը, ինչը կարող է նաև անդառնալի հետևանքներ առաջացնել անձի առողջության համար: Ուստի անհրաժեշտ է, որպեսզի դատահոգեբուժական փորձաքննության նշանակումը ևս իրականացվի մասնագետի մասնակցությամբ: Այսինքն՝ առաջարկվում է «Դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելիս համապատասխան իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը դիմում է բժիշկ-հոգեբույժի դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու նպատակահարմարությունը պարզելու համար: Դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ բժիշկ-հոգեբույժը տրամադրում է գրավոր կարծիք, որը համապատասխան իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է հաշվի առնել	Չի ընդունվել: Դատահոգեբուժական փորձաքննությունը նշանակվում է բացառապես դատարանի կամ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշմամբ, երբ գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի, բնագավառներում հատուկ գիտելիքներ: Յուրաքանչյուր անգամ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելիս դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու նպատակահարմարության վերաբերալ բժիշկ-հոգեբույժի մասնագիտական կարծիքը հաշվի առնելը, կարծում ենք, գործնականում կծանրաբերռնի և՛ բժիշկ-հոգեբույժներին, որոնք սակավաթիվ են, և՛ դատահոգեբուժական փորձաքննություն նշանակող պաշտոնատար անձին: Բացի այդ Փորձագետը գործով չշահագրգռված այն անձն է, ով գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով հետազոտում է գործի նյութերը և դրա հիման վրա եզրակացություն տալիս: Եթե	**Ընդունվել է:**

		դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելիս»: Համապատասխան լրացումը անհրաժեշտ է կատարել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության, ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում:	դատահոգեբուժական փորձաքննության նշանակման անհրաժեշտությունը հիմնավորվի բժիշկ-հոգեբույժի գրավոր կարծիքի հիման վրա, ապա դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն չի լինի:	
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Սույն դրույթով սահմանված չէ փորձաքննվող անձին իր առողջության վերաբերալ փաստաթղթերի տրամադրման պարտադիր պայմանը, ինչը կարևոր նշանակություն ունի անձի իրավունքների լիարժեք իրականացումն ու պաշտպանությունը ապահովելու համար: Առաջարկում եմ այս մասը լրացնել հետևյալ նախադասությամբ: Դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև հատուկ կարծիք պարունակող եզրակացությունը կազմվում է երեք օրինակից, որից մեկը տրվում է դատահոգեբուժական փորձաքննություն նշանակած պաշտոնատար անձին (մարմին), մյուս օրինակը կցվում է փորձաքննության ենթարկված անձի բժշկական փաստաթղթերին, երրորդ օրինակը տրամադրվում է դատահոգեբուժական փորձաքննության ենթարկված անձին:	Ընդունվել է: Նախագծի 25-րդ հոդվածը լրացվել է 12-րդ կետով:	**Ընդունվել է:**
Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյան	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	ՄԱԿ-ի Հաշմանադամություն ունեցող հարցերով կոմիտեն բազմիցս անդրադաձել է «տառապել» հասկացությանը և առաջարկել է հրաժարվել հաշմանդամությամբ տառապելու բառապաշարից: Իսկ քանի որ հոգեկան առողջության խնդիրները դրանք նաև հոգեբանասոցիալական հաշմանդամության են հանգեցնում, ուստի նախընտրելի է չկիրառել «տառապել» բառը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
Հայաստանի Հանրապետության կառավարություն	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկվում է Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունվարի 30-ի թիվ ՍԴՈ-1504 որոշման հիման վրա Նախագծի 17-րդ հոդվածում կատարել լրացումներ՝ կապված երեխայի և անգործունակ ճանաչված անձանց կողմից իրազեկված համաձայնություն տալու վերաբերյալ: Մասնավորապես առաջարկվում է հետևյալը. 16 տարին լրացած երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տրվում է նրանց կողմից, եթե՝ 1) բժիշկ-հոգեբույժի կարծիքով 16 տարին լրացած երեխան կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձն ունակ է հասկանալու հոգեբուժական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևաքները,	Ընդունվել է: Նախագծի 17-րդ հոդվածը լրացվել է 2-5-րդ մասերով:	**Ընդունվել է:**

		2) այդ տեղեկությունները չեն վնասի 16 տարին լրացած երեխային կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձին, 3) կդյուրացնեն նրանց հոգեբուժական օգնության և սպասարկման տրամադրումը: 16 տարին լրացած երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է որ հոժարակամ հոսպիտալացման կանոններով, եթե հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ նրանց նկատմամբ անհրաժեշտ է իրականցնել հոգեբուժական միջամտություն: Առաջարկվում է նաև սահմանել, որ երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական օգնությունը և սպասարկումն իրականացնելիս նրա կարծիքն ամրագրելը պարտադիր է:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկվում է նախագծի 25-րդ հոդվածում փորձաքննությունների իրականացման առավելագույն ժամկետ սահմանել հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության համար մինչեւ 45-օրյա ժամկետը, իսկ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության համար՝ մինչև 25-օրյա ժամկետ:	Ընդունվել է մասնակի: Նախագծի 25-րդ հոդվածի խմբագրվել է: Մասնավորապես հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության իրականացման համար սահմանվել է մինչեւ 45-օրյա ժամկետ, իսկ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության իրականացման համար՝ մինչեւ 25-օրյա ժամկետ: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով հացագործությունների մասին հաղորդումների քննարկման փուլի համար սահմանվում է առավելագույնը 30-օրյա ժամկետ, ուստի միայն նշված փուլում նշանակվող դատահոգեբուժական փորձաքննության իրականացման համար սահմանվել են հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության իրականացման համար մինչեւ 24-օրյա ժամկետ, իսկ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննության իրականացման համար՝ մինչև 15-օրյա ժամկետ:	**Ընդունվել է:**
Հայաստանի Հանրապետության կառավարություն	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն	Առաջարկվում է նախագծի 25-րդ հոդվածի 10-րդ մասում սահմանված դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության տրամադրման համար նախատեսված 1-օրյա ժամկետը փոխարինել 3-օրյա ժամկետով:	Ընդունվել է: նախագծի 25-րդ հոդվածի 10-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

	կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	<<Հոգեբուժական օգնության մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> (*Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկվում է նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսել նաև բժշկական գաղտնիք համարվող տվյալները «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգով ստանալու իրավասություն սահմանել նաև Ոստիկանության համար՝ վարորդական իրավունք տրամադրելու (փոխանակելու), զենքի շրջանառությունը վերահսկելու, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման նպատակով:	Ընդունվել է: Համապատասխան լրացումը կատարվել է Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:	**Ընդունվել է:**
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-479[3] -13.02.2020-ԱՍ-011/0)	Առաջարկվում է քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել լրացում այն մասին, որ դատարանը քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ոչ հոժարակամ հոսպիտալացման կանոններով քննում և լուծում է նաև 16 տարին լրացած երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական օգնությունն ու սպասարկումն իրականացնելու համար իրազեկված համաձայնություն ստանալու վերաբերյալ դիմումները:	Ընդունվել է: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագգիծը լրացվել է 270 [2] հոդվածով:	**Ընդունվել է:**